

Գևորգ Ս. Խուրդիյան  
*Պատմ.գիտ. դոկտոր*

Մենք չենք ճանաչում ֆիզիքականի և հոգեկանի «միացումն», ոչ էլ երկու «բաժանելի կողմերի միություն», որովհետև նրանք՝ ֆիզիքականը և հոգեկանը, ըստ մեր ըմբռնողության, երբեք բաժանած չեն եղել, որ կարիք լինէր նրանց «միացնելու», մի միության մէջ դնելու<sup>1</sup>:

Եր. Ֆրանգեան

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՅՈՒՆԱՆ ԴՐՈՅԶԵՆԻՅ ՄԻՆՉԵՎ ՌՈՒՄԻՆ ՔՈՒԼԻՆԳՎՈՒԴ

Մաս երկրորդ: Էռնստ Բերնհայմը և հոգեֆիզիկական  
պատճառականության սկզբունքը\*

Մուտք

19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին տասնամյակների եվրոպական պատմագիտության ինքնատիպ դեմքերից մեկն էր իր հրապարակած դասագրքերի միջոցով պատմության տեսական հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքների որոշակի ու հստակ համակարգ ձևավորած **Էռնստ Բերնհայմը** (1850–1942)<sup>2</sup>:

Դեռևս 1889 թվականին, շնորհիվ նրա հրատարակած պատմության

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.12.2014:

1 **Եր. Ֆրանգեան**, Հասարակագիտական էտիկոններ: Հ.Յ. Դաշնակցության սոցիալ-փիլիս. աշխարհայեցողության հիմնատրաման շուրջը, Բագու, տպարան «Արամագր», 1917, էջ 99:

2 **Էռնստ Բերնհայմը** ծնվել է 1850 թվականին՝ Համբուրգում, հրեա առևտրականի ընտանիքում: Հաջորդաբար սովորել է Բեռլինի, Հայդելբերգի ու Ստրասբուրգի համալսարաններում: 1873 թ. առաջին անգամ է պաշտպանել դոկտորական դիսերտացիա, 1875-ին՝ երկրորդ անգամ: 1883-ից աշխատել է Գրայֆսվալդի համալսարանում, որի ռեկտորն է եղել 1899-ից մինչև 1921 թվականը: Մինչ այդ՝ 1886-ին, հրաժարվել է հուդայականությունից և ընդունել բողոքականություն: Սակայն, չնայած դրան, 1933-ին, Հիտլերի իշխանության գալու արդյունքում է. Բերնհայմին արգելում են անգամ դասախոսություններ կարդալ: Իր հրեական ծագման համար 1935-ին նա զրկվում է նաև գերմանական քաղաքացիությունից, սակայն 1938-ին ժամանակավոր քաղաքացիություն ստանալու արդյունքում կարողանում է փրկվել արքայից: Մահացել է 1942 թ. մարտի 3-ին, որից հետո է. Բերնհայմի գործընկերները միայն 1943 թ. հուլիսի 23-ին են կարողանում նրա աճյունասափորը հանձնել հողին:

փիլիսոփայության և մեթոդաբանության դասագրքի, գերմանական պատմագիտության մեջ որոշակի համակարգի բերվեցին այդ գիտակարգերը՝ առաջ անցնելով նույն նպատակով Ֆրանսիայում 1898-ին հրատակված **Շ.-Վ. Լանգլուայի** ու **Շ. Սենյորսի** աշխատությունից<sup>3</sup>: Իսկ ի դեմս 20-րդ դարասկզբին լույս տեսած Է. Բերնհայմի խիստ համառոտ, բայց բավականին հղկված ու տրամաբանված «Պատմության փիլիսոփայություն, նրա պատմությունն ու խնդիրները» ու մանավանդ՝ «Պատմական գիտության ներածություն»<sup>4</sup> աշխատությունների, մենք գործ ունենք պատմության՝ որպես գիտության առարկայի ու խնդրակարգի այնպիսի հստակ շարարանքի հետ, որն իր այժմեականությունը պահպանում է նույնիսկ մեր օրերում:

Ի տարբերություն դրոյզենյան «Իստորիկայի»՝ Է. Բերնհայմի աշխատությունները ոչ թե պատմության **մարդակենտրոն ընկալման** տեսական հիմունքների խոր ու լայն ակոս էին բացում, այլ ապահովում էին առկա մասնագիտական գիտելիքների հետագա համակարգման, ճշգրտման և ամենակարևորը՝ դրանց կիրառության որակապես նոր մակարդակ: Է. Բերնհայմը խորացրեց ու հստակեցրեց պատմության տեսության ու մեթոդաբանության վերաբերյալ նախորդ հետազոտողների դիտարկումները՝ հիմնվելով պատմական գիտության զարգացման ողջ ընթացքը «...պատումի կամ թվարկման, պրագմատիկ և գենետիկ»<sup>5</sup> աստիճանների բաժանող պարբերացման վրա: Նման տարանջատումը մի փոքր այլ հաջորդականությամբ, իսկ հաճախ էլ պատմագիտության զարգացման բուն պրոցեսի երկանդամ բաժանման միջոցով, հիմնականում պահպանվում է նաև մեր օրերում հրապարակվող պատմության տեսության ու մեթոդաբանության դասագրքերում: Այդ աստիճաններից առաջինը, որը Է. Բերնհայմն անվանում էր «**ներբողային պատմություն**», սկիզբ է առել մարդկության անցյալի մասին տեղեկատվության բանավոր փոխանցումից և իր ամփոփ տեսքն է ստացել պատմահայր Հերոդոտոսի մոտ, իսկ երրորդի կամ **ուսուցանող (պրագմատիկ)** պատմության դասական ներկայացուցիչը, Է. Բերնհայմի կարծիքով, Թուկիտիդեսն էր: Սակայն պատմության՝ որպես ուրույն գիտության ձևավորման նախադրյալների հատունացումը Է. Բերնհայմը կապում էր 18-րդ դարի երկրորդ կեսի և 19-րդ դարի հետ, երբ անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին պատմությունն իր զարգացման պրոցեսում ընկալելու համար: Այս երրորդ հանգրվանին Է. Բերնհայմը տալիս էր **գենետիկ պատմություն** բնորոշումը, քանզի նման պրոցեսում պատմությունը վերածվում է գիտության՝ «...բառի ամբողջական իմաստով, որովհետև այստեղ պատճառականության յուրահատուկ հարաբերություններով կապված փաստերի հատուկ բնագավառի հետա-

3 Տե՛ս Յ.-Վ. Լանգլուա, Յ.Սենյոբոս. Введение в изучение истории. Пер. с франц. А. Серебряковой. Гос. публ. ист. б-ка России. 2-ое изд. Под ред. и со вступит. ст. Ю. И. Семенова. М. 2004.

4 Տե՛ս Է. Բերնեյմ, Философия истории, ее история и задачи. Пер. с нем. Рождественского А.А. – М. “Клочков”, 1910. – 112 с. Տե՛ս նաև՝ Введение в историческую науку. Пер. с нем. Под ред. В.В. Битнера. Изд. 2-ое– М.; Книжный дом “ЛИБРОКОМ”, 2011.

5 Է. Բերնեյմ, Введение в историческую науку; Пер. с нем. Под ред. В.В. Битнера. Изд. 2-ое– М.; Книжный дом “ЛИБРОКОМ”, 2011. с. 4. Հետագա մեջբերումները կատարվելու են հիմնականում այս գրքույկից, որն ամփոփ կերպով ներկայացնում է Է. Բերնհայմի պատմատեսության հիմնական դրույթները:

գոտությունը, առարկայի գուտ ճանաչողությունը դառնում են նպատակ»<sup>6</sup>:

Զարգացման գաղափարի ընկալման և մարդկային կեցության ուսումնասիրության ասպարեզում նրա կիրառման հետ հետ միասին, պատմական գիտության ծնունդը պայմանավորող պատճառների շարքում է. Բերնհայմն առանձնացնում էր նաև «մարդկային գոյի միասնության», այսինքն, ժամանակակից տերմինաբանությամբ՝ **պատմական ամբողջի** ընկալումը: Վերջինիս մասին գիտելիքների ձևավորման գործում նա կարևորում էր ողջ մարդկության պատմության միասնականության ընկալման հիմքը դարձած՝ «...մեղքի, ազատագրման ու երկրային դատարանի ընդհանուր ձակատագրով կապված Աստծո զավակների համերաշխության մասին»<sup>7</sup> քրիստոնեության պատկերացումները:

Պատմական գիտության ձևավորման հանգրվանների նման մարդակենտրոն և միաժամանակ հումանիստական ընկալումը պայմանավորում էր է. Բերնհայմի վերաբերմունքը պատմության փիլիսոփայության հիմնական ուղղությունների հանդեպ: Ուստի իր կողմից 5 հաջորդական կետերում ամփոփված վոլտերյան «la philosophie de l'histoire»-ին բնորոշ «մեծ ընդհանուր հարցերից» կամ պատմության հանդեպ հայացքներից (1.դուալիստական-թեոկրատիկ, 2.մատերիալիստական, 3 պոզիտիվիստական, 4. հետկանտյան փիլիսոփայության պատմություն և 5. հումանիտար փիլիսոփայություն), է. Բերնհայմը նախապատվությունը տալիս էր **վերջինին**:

## 1. է. Բերնհայմի պատմահայեցողության փիլիսոփայական ակունքները

Պատահական չէ, որ է. Բերնհայմը «հումանիտար փիլիսոփայություն» հասկացության միջոցով գիտակցաբար իրեն սահմանազատում էր «հետկանտյան փիլիսոփայության պատմություն»-ից, որ նույնն է, թե Շելլինգի, Ֆիխտեի ու մանավաղ՝ Հեգելի գաղափարներից և դրանց հիմքի վրա ձևավորված, իր խոսքերով՝ «գերմանական պատմական գիտության գլխավոր առաջնորդ»<sup>8</sup> Լեոպոլդ Ֆոն Ռանկեի պատմատեսությունից: Որովհետև Լ. Ռանկեի աշակերտներից ու մերձավոր գործընկերներից մեկի՝ պրոֆ. **Յուլիուս Վայցգեկերի** ղեկավարությամբ 1875-ին երկրորդ անգամ դոկտորական ատենախոսություն պաշտպանած է.Բերնհայմը պատմագետների արհեստախմբի կողմից կամա թե ակամա պետք է համարվեր «գերմանական պատմական գիտության գլխավոր առաջնորդի» աշակերտի աշակերտը<sup>9</sup>: Մինչդեռ է. Բերնհայմի պատմահայեցողության փիլիսոփայական հիմքերը ավելի մոտ էին այն տեսական-իմացաբանական ակունքներին, որոնք պայմանավորել էին ոչ թե Լ. Ռանկեի, այլ ժամանակին նույնպես նրա դպրոցն անցած մյուս մեծ պատմագետի՝ **Յո.**

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, էջ 6:

8 Նույն տեղում, էջ14:

9 Առավել ևս որ առաջին դոկտորականը է. Բերնհայմը պաշտպանել էր Լ. Ռանկեի հետ միասին հոչակավոր «**Monumenta Germaniae Historica**» հրատարակության հիմքերը դրած **Գեորգ Վայցի** ղեկավարությամբ:

**Գրողներ**ի աշխարհընկալման ձևավորումը: Որովհետև «հումանիտար փիլիսոփայություն» ասելով՝ Է. Բերնհայմը նկատի ունի 18-րդ դարից գերմանական մտքի մեջ ամրապնդված մարդակենտրոն մտածողությունը, որի հաջորդական կրողներն էին **Ուիլյամ Գոտֆրիդ Հերդերը, Վիլհելմ Հումբոլդտը** և վերջապես՝ **Հերման Լոտցեն**: Հերդերով սկիզբ առած այս յուրահատուկ եռամիասնության աշխարհընկալմանը բնորոշ հիմնական առանձնահատկությունը Է. Բերնհայմը համարում էր մարդկանց և ժողովուրդների ողջ բազմազանությանը միավորող «...«**հումանիտարության**», **մարդկայության ընդհանուր հիմնական գծերի, ընդհանուր տիպի տիրապետությունը** (ընդգծումը մերն է-Գ.Խ.)»<sup>10</sup>: Դրա առավել ամբողջական ընկալումը նա հայտնաբերել էր 1856-1864 թթ. շարադրված Հերման Լոտցեի եռահատոր «Միկրոկոսմոս: Մտքեր բնական պատմության և մարդկության պատմության մասին» („**Mikrokosmos. Ideen zur Naturgeschichte und Geschichte der Menschheit**“) աշխատության մեջ: Իր ժամանակին Հեգելից հետո Գերմանիայի ամենամեծ փիլիսոփան համարված այդ ինքնատիպ մտածողը որպես պատմական կյանքի «ինքնուրույն հիմնական գործոններ» առանձնացրել էր «...մարդկանց **ներքին ձգտումները** և բնության ու հասարակության **արտաքին պայմանները** (ընդգծումները մերն են-Գ.Խ.)»<sup>11</sup>:

Սրանով Հերման Լոտցեն, Է. Բերնհայմի կարծիքով, հավասարապես բարձր էր կանգնել իդեալիզմից ու մատերիալիզմից, քանզի նրա համար «...բնության օրենքների մեխանիզմը **անհրաժեշտ ձև է**, որում արտաքին կաղապարների միջոցով իրացվում են մարդկային էակների գործունեության ինքնուրույնաբար տրված ներքին շարժառիթները՝ իրենց, գնալով ավելի ու ավելի ուժեղացող և բազմազան ֆիզիկական, քիմիական, կենսաբանական բնույթի ռեակցիաներով, որոնք փոխգործակցության մեծ համակարգի միջոցով լցնում են աշխարհը (ընդգծումը մերն է-Գ.Խ.)»<sup>12</sup>:

Է. Բերնհայմի կարծիքով՝ նման «ինքնուրույն հիմնական գործոններին» վրա հիմնված աշխարհընկալումը լավագույն հիմքը կարող է դառնալ պատմական անցյալի հասկացման համար ու ծառայել նաև որպես նրա ուսումնասիրության մեթոդ:

Փորձենք պարզել՝ որտեղից էր բխում Է. Բերնհայմի բնորոշմամբ՝ մատերիալիզմից ու իդեալիզմից բարձր կանգնած Հերման Լոտցեի և նրա նախորդներից՝ Ու.- Գ. Հերդերի նման մոտեցումը, որպեսզի հասկանանք, թե ինչու՞ և ինչպե՞ս այն ընկալվեց ու յուրացվեց Է. Բերնհայմ-պատմագետի կողմից: Ակնհայտ է, որ **ինացաբանական առումով** Հերման Լոտցեի մոտ մենք գործ ունենք «անսկիզբ ու անվերջ» սուբստանցի երկու հատկանիշների մասին 17-րդ դարի հոլանդացի մտածող **Բենեդիկտ (Բարուխ) Սպինոզայի** ուսմունքի՝ հոգեֆիզիկական գուգահեռների տեսության խոր ընկալման հետ, որը մանավանդ 19-րդ դարում լայն տարածում էր գտել՝ յուրացվելով ոչ միայն նրա, այլև **Էռնստ Մախի** ու **Ռիխարդ Ավենարիուսի** կողմից: Սուբստանցի երկու ատրիբուտների՝

10 Յ. Բերնհայմ, Введение в историческую науку, с.15.

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում, էջ 16:

մտածողության ու տարածականության մասին Բ. Սպինոզայի ուսմունքն ապացուցում էր, որ «...հոգին և մարմինը միևնոյն իրականի երկու կողմերն են, երկու տարբեր երևոյթաձևերը»<sup>13</sup>: Ավելին՝ Սպինոզան գտնում էր, որ այս երկու շարքերը միմյանց հետ չեն խաչաձևվում և ընթանում են զուգահեռ (պարալել), այսինքն՝ ինքնուրույն են մեկը մյուսի հանդեպ: Այսպիսով՝ Հերման Լոտցեի կողմից առաջադրված մարդկանց ներքին ձգտումների և բնության ու հասարակության արտաքին պայմանների հոգեֆիզիկական պարալելիզմի գաղափարը ամենևին էլ նորություն չէր փիլիսոփայության պատմության մեջ և հանդիսանում էր **գիտակցության փիլիսոփայության**<sup>14</sup> զարգացման որոշակի հանգրվանի արտահայտությունը: Ուստի է. Բերնհայմ-պատմագետի համար այն ծառայում էր իբրև յուրահատուկ բանալի՝ փիլիսոփայության իդեալիստական ու մատերիալիստական մեկնակետերից մեկի կամ մյուսի առաջնության վրա հիմնված պատկերացումների շրջանակից դուրս գալու և մոնիստական պատմատեսություն մշակելու համար:

Իսկ ինչ վերաբերում է է. Բերնհայմի նման ընտրության **արժեքային** կողմին, ապա ակնհայտ է, որ նրա հիմքում առկա էր գերմանական փիլիսոփայության մեջ խոր արմատներ ձգած առաջադիմության (պրոգրեսի) գաղափարի **մարդակենտրոն** ընկալումները յուրացնելու և դրանք պատմության ճանաչողության բանալիների վերածելու ցանկությունը: Քանզի, ինչպես հետագայում արձանագրում էր հայ նշանավոր փիլիսոփա Եր. Ֆրանգյանը՝ «Լոտցե, Հերդեր և ուրիշները ճանաչում են պատմութեան բոլոր դարաշրջաններում **մարդկայնութեան**, հումանիզմի իդեալի զարգացումը: Նրանց կարծիքով մարդկութեան առաջադիմութիւնը գնում է այդ իդեալի ուղղութեամբ: Նրանց համոզմունքով համաշխարհային պատմութիւնը այլ բան չէ, եթէ այդ իդեալի **շարունակական**, անընդհատ իրականացումը»<sup>15</sup>:

## 2. Պատմագիտական հետազոտության առարկան և նպատակը

Հիմնվելով պատմության «ինքնուրույն հիմնական գործոնների» հոգեֆիզիկական ընկալման վրա՝ է. Բերնհայմը տալիս էր պատմագիտության առարկայի հետևյալ սահմանումը. «**Պատմական գիտությունը հետազոտում և հոգեֆիզիկական կապի մեջ շարակարգում է մարդկանց զարգացման փաստերը նրանց՝ որպես սոցիալական էակների, գործունեության տիրույթում**»<sup>16</sup>: Նման մոտեցումը թույլ էր տալիս է. Բերնհայմին պատմությունը՝ որպես գիտություն, տարանջատել անցյալի գեղարվեստական ընկալումից (չժխտելով շարադրանքի գեղարվեստա-

13 Եր. Ֆրանգեան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը: Իրապաշտ փիլիսոփայութիւն, Փարիզ, 1929, էջ 105:

14 **Գիտակցության փիլիսոփայությունը** փիլիսոփայական գիտակարգ է, որի ուսումնասիրության առարկան գիտակցության բնույթն է, ինչպես նաև գիտակցության ու ֆիզիկական իրողության (մարմնի) հարաբերակցությունը:

15 Եր. Ֆրանգեան, Հասարակագիտական էտիլոներ: Հ.Յ. Դաշնակցութեան սոցիալ-փիլիս. աշխարհայեցողութեան հիմնադրման շուրջը, Բագու, տպարան «Արամագր», 1917, էջ 30:

16 Յ. Բերնհեյմ, Введение в историческую науку, с.16:

կան ձևի գեղագիտական արժանիքները): Դրա հետ միասին՝ նա կարևորում էր գիտնականի համար բացարձակ առաջնահերթություն հանդիսացող՝ պատմագիտության ճանաչողական գործառույթը: Ուստի «մեր առարկայի գիտական բնույթը»<sup>17</sup> Է. Բերնհայմը պաշտպանում էր նաև մյուս ծայրահեղությունից՝ բնագիտությունից փոխառված այն հանրահայտ մոտեցումից, համաձայն որի՝ եզակի դեպքերի կամ առանձին դեկավար անհատների գործունեության ուսումնասիրությունը իբր՝ գիտական բնույթ չունի, քանի որ եզակի փաստերը հնարավոր չէ քննել պատճառականության համընդհանուր օրենքներով, որոնցով առաջնորդվում է գիտությունը: Է. Բերնհայմը վճռականորեն մերժում էր անգամ մեր օրերում բնագիտության օբյեկտիվիստական պատկերացումները չհաղթահարած պատմագետների մոտ պահպանվող նման թյուր պատկերացումները, որոնց համաձայն՝ ճշմարիտ պատմական գիտության առարկան **տիպական ու զանգվածային** երևույթներն են: Նրա կարծիքով, պատճառականության տիրույթը չի սահմանափակվում բնագիտության մեջ իշխող մոտեցմամբ՝ եզակի երևույթները միայն ընդհանուր պատճառներով բացատրելու ելակետով: Քանզի պատմությունն ինքը, փորձելով բացահայտել մարդկության զարգացման ընթացքը, ինքնաբերաբար իր հետազոտության առարկան է դարձնում որոշակի բնագավառի երևույթների միջև ի հայտ եկող **տարբերությունները**: Որովհետև զարգացման պրոցեսի ուսումնասիրությունը պահանջում է գնալով միմյանցից զանազանվող երևույթների **փոփոխությունների** ընթացքի քննությունը: **Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել տարբերությունների աստիճանական կուտակման միջոցով տեղի ունեցող փոփոխությունները՝ մնալով տիպականի ու զանգվածայինի բացահայտմանն ուղղված նոտոթետիկ մոտեցումների գերության մեջ:**

Հարցի պատասխանը Է. Բերնհայմի հետևյալ եզրահանգումն էր. «Ճանաչողության այդ եղանակը - օրինաչափ կամ ինչպես նրան անվանում են՝ նոտոթետիկ կամ նորմատիվ ճանաչողությունը - իր նշանակությունը պահպանում է միայն այնքան ժամանակ, քանի դեռ խոսքը գնում է ոչ թե որոշակի բնագավառի եզակի դեպքերի ու երևույթների տարբերությունների, այլ օրենքների մասին, որոնք որոշում են միջին ճշմարիտի գոյությունն ու պահվածքը»<sup>18</sup>:

Պատճառն ակնհայտ է. Է. Բերնհայմի սահմանմամբ՝ «Պատմության առարկան **մարդկային գործողություններն** են, և դա մարդու **հոգեֆիզիկական էության** հիմնական փաստն է, որ նա իր վարքի ու գործողությունների մեջ ղեկավարվում է ոչ միայն **արտաքին պատճառներով**, այլև էական կերպով **ներքին պատճառներով՝** գիտակցության ներքին ներգործությունների ու ազդեցությունների միջոցով, այսինքն՝ **իր ընկալմանը, մտածողությանը և կամքին համապատասխան նա գործում է նպատակամետ կերպով** (ընդգծումները մերն են-Գ.Խ.)»<sup>19</sup>: Ու քանի որ այդ ներքին պատճառները վերաբերում են մարդկային հոգեբանությանը,

17 Նույն տեղում, էջ 16:  
 18 Նույն տեղում, էջ 17:  
 19 Նույն տեղում:

ՀԻՄՆԱԲԱՐՆԵՐ  
 Զ (ԺԲ) ԳՄՔԻ, ԹԻՎ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014  
 ՎԷՆ համահայկական հանդես

ապա ըստ Է. Բերնհայմի՝ «... ճանաչողության այս տարատեսակն է, որ առավելագույն նշանակություն ունի պատմության մեջ, որովհետև **արտաքին ֆիզիկական պատճառները մեծ մասամբ ազդում են միայն շնորհիվ այն բանի, որ մուտք են գործում մարդկային գիտակցության մեջ և դառնում են ներգործուն հոգեբանական պատճառներ** (ընդգծումը մերն է-Գ.Խ.)»<sup>20</sup>:

Ակնհայտ է, որ պատմական փաստի ընկալումն իբրև իր արտաքին ու ներքին կողմերն ունեցող մարդկային գործողություն և նրանում ներքին պատճառների առաջնայնության սահմանումը մարդ-էական բնորոշ նպատակամետ կամքի հիմքը կազմող «Ես-կեցության» ստեղծագործ-բարեփոխիչ էության մասին դրոյզենյան հիմնագաղափարի խորացումն ու կոնկրետացումն էր՝ հոգեֆիզիկական պատճառականության տիրույթում:

### 3. Հոգեֆիզիկական պատճառականության դրսևորման երկու կշռույթներն ու երեք մակարդակները

Թեև Է. Բերնհայմի կարծիքով հոգեբանական պատճառականությունը, ֆիզիկականի նման, նույնպես բխում է համընդհանուր բնական անհրաժեշտությունից, ուստիև ունի իր ընդհանուր օրենքները, բայց «նա այլ կերպ է բացատրում իր բնագավառի երևույթները. ոչ թե որպես ընդմիջտ միակերպորեն որոշված և նախապես որոշվելիք պատճառների արդյունք (պրոգրեսիվ կերպով), այլ որպես գործողություններ, որոնք սկիզբ են առել եզակի դեպքի առանձնահատուկ պայմաններում, և պատճառներ, որոնց հարկ է որոշակիացնել (ռեգրեսիվ ձևով)»<sup>21</sup>: Դրանով ինքնաբերաբար Է. Բերնհայմը «բացում էր» նյութական աշխարհում գործող **կրկնվող անընդհատությունից** սկզբունքորեն տարբերվող պատմության ընթացքի **վերընթաց անընդհատության** մասին Յո. Դրոյզենի խիստ ընդհանուր հարցադրումը և ցույց էր տալիս, որ նման երևույթը հավասարապես վերաբերում է և՛ անհատների «եզակի կենսակերպին», և՛ զանգվածների «ընդհանուր կյանքին», քանզի դրանք ենթակա չեն ընդհանուր վիճակագրական օրենքներից բխող եզրակացություններին, հաշվարկին, նախապես որոշարկմանը, «...ինչպես գտնում են Բոքլը և ուրիշները»<sup>22</sup>:

Հասկանալի է, որ հոգեֆիզիկական պատճառականության նման ընկալման միջոցով Է. Բերնհայմը սահմանազատվում էր պոզիտիվիստական պատմափիլիսոփայությանը բնորոշ ճանաչողական մոտեցումներից, որը ելնելով օբյեկտիվիստական մեկնակետից՝ առաջնությունը տալիս էր զանգվածների «ընդհանուր կյանքին»: Ավելին՝ Է. Բերնհայմի կարծիքով անգամ «...զանգվածային երևույթներն ու պայմանները, հակառակ մակերեսային դիտարկմանը, իրենց հիմքում անկասկած որոշվում են անհատների կողմից...»<sup>23</sup>:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում:

Միննույն ժամանակ, Բերնհայմ-պատմագետի համար եզակին ու անկրկնելին իմաստավորվում էր ոչ թե նորկանտականներին բնորոշ՝ իդեոգրաֆիկ մեթոդի բացարձականացման ճանապարհով, այլ միայն կոնկրետ պայմաններում «ընդհանուր կյանքի» հանդեպ նրա ձեռք բերած առաջնայնության որոշակի ու հստակ պատճառների ընկալման միջոցով: Նրա կարծիքով՝ իրականում նման պատճառների բացահայտումը հնարավոր է միայն զանգվածային երևույթների ելքը պայմանավորող անհատականի կոնկրետ դրսևորումների հետահայաց քննության միջոցով: Որպես օրինակ՝ Է. Բերնհայմը փորձեց ներկայացնել անհատականի և ընդհանրականի փոխազդեցության մեխանիզմները պատմության կերտման վճռորոշ հանգրվաններում: Նման մտահղացումն իրականացվեց ժողովրդական ապստամբության կուլմինացիոն պահը՝ շարժումը ճնշելու փորձն ու դրան հակազդելու՝ ապստամբների համառությունը մտովի խաղարկելու միջոցով:

**Եվ այսպես՝ տեղի է ունենում ապստամբների մեծ զանգվածի կուտակում, նրանց առաջարկում են ցրվել և իբրև նախազգուշացում՝ հնչում է դատարկ փամփուշտներով համազարկը...**

Է. Բերնհայմի կարծիքով՝ դրանից հետո անհնար է «ընդհանուր օրենքներով» բացատրել զարգացումների հետագա ընթացքը, եթե անգամ պատմագետը կարողանա հարազատորեն ներկայացնել նրա մթնոլորտն ու բախման մասնակիցների քանակական չափորոշիչները: Պատճառն ակնհայտ է. «Կզիջի՞ արդյոք ամբոխը կամ կղիմանամ հարձակմանը՝ մի կողմից կախված է առանձին անհատների գրգռվածության ու վճռակալության, մյուս կողմից՝ զգուշավորության ու վախի աստիճանից և այն հարաբերություններից, ըստ որոնց՝ առանձին անհատների մոտ տվյալ պահին տիրապետում են այս կամ այն խթանները (ազդակները), որոնք վերջ ի վերջո գերակայություն են ձեռք բերում մարդկանց մեծ կամ փոքր հանրագումարի մոտ: Նույնիսկ այն պարագայում, երբ մեկ կամ մի քանի վճռական մարդիկ ցանկանում են «ոգևորել» ամբոխին սեփական վարակիչ օրինակով, դեռևս կասկածելի է մնում՝ կտրվի՞ արդյոք զանգվածը նման ոգևորությանը, քանզի դա նորից հանգում է այն հարցին, թե ինչպես են արձագանքելու առանձին անհատները տվյալ ազդակներին: Ընդ որում, մենք չենք մոռանում այն իրողությունը, որը կարող է մեծ նշանակություն ունենալ հանրային հոգեբանության մեր հետագա շարադրանքում, այսինքն՝ ամբոխի ընդհանուր դրությունը, հավաքական ուժի և նպատակի գիտակցումը, քանզի քանակության ու կրքերի պատկերը ինքն իրեն գործուն պատճառ է հանդիսանում: Բայց դրանք նույնպես ազդեցություն են գործում որպես **առանձին անհատներին խթանող գործոններ, որոնց պահվածքն է որոշում գործը** (ընդգծումը մերն է-Գ. Խ.)»<sup>24</sup>: Ուստի՝ «Միայն երբ արդեն հայտնի է որոշման ելքը, կարելի է այն բացատրել համաձայն պատճառների, որոնք պետք է պայմանավորեին այն: Այդպես լինում է ամեն տեղ»<sup>25</sup>,- եզրակացնում է Է. Բերնհայմը:

Իսկ ինչ մնում է ընդհանուր օրենքներին, ապա Է. Բերնհայմի կարծի-

24 Նույն տեղում, էջ 18:

25 Նույն տեղում:



քով, դրանք ոչ մի տեղ չեն մտնում պատմագիտության խնդրակարգի մեջ, եթե դիտարկվում են կոնկրետ երևույթների փաստական **տարբերություններից** անկախ, քանզի դա կարող է լինել միայն բնական գիտությունների ասպարեզում, ուր տարբերությունները մեծավ մասամբ էական հետաքրքրություն չեն ներկայացնում:

Ուրեմն՝ **«Գոյություն չունի «իսկական գիտական պատմություն», որը զբաղվում է զանգվածային պայմաններով ու երևույթներով, և ոչ գիտական պատմություն, որը պատմում է անհատների և եզակի դեպքերի մասին. գոյություն ունի միայն մեկ գիտություն, որի ճանաչողության անբաժանելի-հավասարազոր օբյեկտն են հանդիսանում մարդկային գործունեության երկու տեսակները (ընդգծումը մերն է-Գ.Խ.)»**<sup>26</sup>:

Սրանով է. Բերնհայմը փաստորեն մերժում էր իր ժամանակակից նորկանտական փիլիսոփաների՝ Վ. Վինդելբանդտի ու Հ. Ռիկերտի կողմից առաջադրած նոմոթետիկ ու իդիոգրաֆիկ մեթոդների կամ մոտեցումների ուղղագիծ հակաթեզը, որի հիման վրա նրանք բնական գիտությունների համար առաջարկում էին նոմոթետիկ, իսկ մարդու մասին գիտությունների համար՝ իդիոգրաֆիկ մեթոդը: Միաժամանակ՝ «համագիտական մոնիզմի» նման պաշտպանությունը է. Բերնհայմի մոտ չէր հանգում նաև մարդուն որպես «բնության զավակ» դիտարկող՝ կենսաբանական, ֆիզիոլոգիական կամ մարդաբանական առանձնահատկությունների քննությանը:

Է. Բերնհայմը կենսաբանական պատճառականության հետ միասին սահմանազատվում էր նաև տնտեսական պատճառականությունից՝ հիմնվելով մարդու՝ որպես պատմություն կերտող սուբյեկտի, **մարդկայնությունը** պայմանավորող գործոնների գնահատման վրա. «Պատմությանն է վերաբերում այն ամենը, ինչով հուզվում է ու արտադրում, ինչի վրա ազդում է և ինչին ենթարկվում է մարդը...»<sup>27</sup>: Այսինքն՝ մարդկության պատմությունը նա դիտարկում էր մարդու գործունեության մեջ բանականորեն ու հուզականորեն կարգաբերվող նպատակների ամկայության տիրություն:

Ընդ որում «գործունեություն» հասկացության տակ է. Բերնհայմը ներառում էր նաև այսպես կոչված «դրություններն», ու «կանխատրամադրությունները», որոնց տարբեր ինտենսիվության անցումների բազմազանությունը հետազոտության մեջ ներառելու համար դրանք բաժանում էր երեք խմբի՝ **եզակի, տիպական և կոլեկտիվ**:

Է. Բերնհայմի կարծիքով՝

**եզակի գործողությունները** հետաքրքրություն են առաջացնում «...միայն մեկ անգամ տեղի ունենալու՝ անհատական միասնության մեջ»<sup>28</sup>:

**Տիպական գործողությունները** բազմաթիվ անհատների միատիպ կրկնվող գործողություններն են՝ կարգը, սովորույթները, բարքերը, որոնք առանձին-առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում, քանզի ծառա-

26 Նույն տեղում:

27 Նույն տեղում:

28 Նույն տեղում, էջ 19:

յում են որպես բոլոր մասնակիցների (տիպերի) վարքի միջինացված օրինակ:

**Կոլեկտիվ գործողությունները**, անկախ նրանից՝ միատիպ են, թե ոչ, բազմաթիվ առանձին անհատների համատեղ գործողություններն են, ինչպես օրինակ՝ ճակատամարտը, կրթությունը, լեզուն, մարդկային հասարակության կրոնը:

Նման եռանդամ բանաձևը, Է. Բերնհայմի համոզմամբ, թույլ է տալիս հաղթահարել պատմագիտության առարկայի տարանջատումը «...կոլեկտիվ զանգվածային գործընթացներին և եզակի գործընթացներին նվիրված գիտության, մշակույթի պատմության և քաղաքական պատմության. երկու ասպարեզներում էլ զանգվածների գործունեությունն ու անհատական -եզակի գործողություններն անխզելիորեն կապված են իրար...ամբողջն ու անհատը ամենուր գտնվում են փոխգործակցության մեջ»<sup>29</sup>:

Այսպիսով՝ ինչպես հոգեֆիզիկական պատճառականության **երկու կշռույթների՝ հոգեկանի ու ֆիզիկականի** փոխադարձ կախվածության մեխանիզմների, այնպես էլ դրանց դրսևորման **երեք մակարդակների՝ եզակիի, տիպականի ու կոլեկտիվի** փոխայամանավորվածության ուսումնասիրության ընթացքում Է. Բերնհայմը բացահայտում էր փոխադարձաբար միմյանց լրացնող որոշակի մեխանիզմներ: Մնում էր հստակեցնել դրանք գործի դնելու ուղղությունը՝ պատմական պրոցեսի բնույթը:

Մարդկային գործողությունների՝ Է. Բերնհայմի ընկալման մյուս սկզբունքային առանձնահատկությունը դրանց նպատակաուղղվածության՝ **զարգացման պրոցեսի** բնության մեջ է: Քանզի գործողությունները պատմագիտական հետազոտության առարկա են դառնում այն աստիճան, որքան որ կարևոր են զարգացման փաստերի ուսումնասիրության համար: Ընդ որում՝ Է. Բերնհայմը իր հետազոտության նյութը հանդիսացող զարգացման փաստերը դիտարկում է այլ փաստերի հետ **կրկնակի պատճառական կախվածության** մեջ՝ ա) ընդհանուր պատճառների ու պայմանների, բ) հատուկ պատճառների շարքում, որոնց թվին է պատկանում տվյալ փաստը՝ որպես նրանց մաս:

Այստեղից էլ ակնհայտ է դառնում, որ զարգացող ամբողջն ունի ինչպես իր **ընդհանրական**, այնպես էլ **յուրահատուկ** գծերը: Ավելին՝ նույն խնդիրը կանգնած է նաև պատմական անհատների գործունեությունն ուսումնասիրողների առջև: Քանզի կարևորելով սոցիալական հոգեբանության դերն ու նշանակությունը՝ Է. Բերնհայմը միաժամանակ նախագգուշացնում էր մարդու ողջ գործունեությունը, մտածողությունն ու ընկալումը որպես սոցիալ-հոգեբանական տարրերի չկայացած գործառույթներ դիտարկելու միտումից խուսափելու անհրաժեշտության մասին՝ «Նկատի ունենալով մի կողմից՝ անհատների հարաբերական ինքնուրույնությունը, իսկ մյուս կողմից՝ ընդհանուր պայմանների հարաբերական հզորությունը, սոցիալական հոգեբանության կարևորագույն խնդիրներից մեկն այն ամենի հետազոտությունն ու շարադրանքն է, ինչը կազմում է անհատի հատկանիշների և ընդունակությունների յուրահատկությունը և այն, ինչը

29 Նույն տեղում, էջ 19:

հանդիսանում է տվյալ ժամանակի ու տվյալ հասարակության ընդհանուր հարստությունը»<sup>30</sup>:

Ուրեմն՝ պատմագիտական որևէ հիմնահարցի ուսումնասիրությանը նվիրված նույնիսկ ամենանեղ հետազոտությունը պետք է հաշվի առնի և՛ անհատների հարաբերական ինքնությունության, և՛ մարդկային ընդհանուր համակեցության ուսումնասիրության առաջադրանքները: Դրանում է. Բերնհայմը նկատում էր այն «**մեծ էթիկական միտումը**», որը տալիս է պատմական գիտության ոգին, այն է՝ քարոզել ցանկացած անհատի, որ «**...նա ոչինչ է և ոչ մի նշանակություն չունի այն հասարակության հետ կենդանի կապից դուրս, որում ինքն ապրում է ու գործում** (ընդգծումը մերն է-Գ.Խ.)»<sup>31</sup>:

#### 4. Հոգեֆիզիկական պատճառականության գույգ կշռույթների հարաբերակցության հիմնահարցը

Է. Բերնհայմը պատմագիտության ասպարեզում շարունակեց 19-րդ դարից մարդու ներաշխարհի մեջ խորացած հոգեբանության հիմնադիրների վերջին հայտնագործությունների կիրառման դրոյզեկյան մոտեցումը: Նա հարստացրեց ու կոնկրետացրեց Յո. Դրոյզեկի կողմից իբրև ընդհանուր սկզբունք առաջադրված՝ կատարելության ձգտող մարդու ազատ կամքի պատմակերտ գործառույթի ընկալումը: Հիմք ընդունելով հոգեֆիզիկական պատճառականության ընձեռած հնարավորությունները և հիմնվելով այն ընդհանուր կանխադրույթի վրա, որ «...մեր գիտության առարկան կազմող մարդկային գործողությունները գլխավորապես հիմնված են հոգեբանական պատճառների վրա, ուստի պատմական գործընթացների պատճառական կապի ճանաչողության համար վերջիններս ունեն մեծագույն նշանակություն»<sup>32</sup>, Է. Բերնհայմը հստակեցրեց հոգեբանական գործոնին տրվող նախապատվության իր ընկալումը հետևյալ տրամաբանական հարցադրման միջոցով. «**Մարդը հոգեֆիզիկական էակ է. հոգեկան ունակությունները՝ ներքին ընկալման ու գրգռվողականության հիմնական փաստով և դրանց բարձրագույն ձևով՝ գիտակցությամբ, ֆիզիկականի հետ միասին իրենցից ինքնուրույն օրինակներ են ներկայացնում**: Արտաքին ազդեցությունները չեն արտացոլվում անմիջականորեն ու պասիվ կերպով, ինչպես լուսանկարչական սկավառակի կամ հայելու վրա, բայց ընկալվում ու վերամշակվում են ներքնապես կենդանի հոգեկան տարրերի կողմից, որոնց սովորաբար հոգի են անվանում: **Միանման բնական պայմանները տարբեր ընդունակությունների ու կանխատրամադրվածության մարդկանց ու նրանց խմբերի մոտ առաջ են բերում խիստ բազմազան ազդեցություններ** և դրանց ներգործության մասին ընդհանուր եզրակացությունները մասնավոր դեպքերի հանդեպ կարող են միայն պայմանական բնույթ ունենալ(ընդգծումները մերն

30 Նույն տեղում, էջ 65:

31 Նույն տեղում, էջ 20:

32 Նույն տեղում, էջ

են-Գ.Խ.)»<sup>33</sup>:

Սրանից անխուսափելիորեն բխում էր **հասկացման** խնդրի առաջադրումը, քանզի եթե միևնույն ելակետային պայմանները տարբեր մարդկանց մոտ առաջ են բերում տարբեր ազդեցություններ, ապա պատճառականության օբյեկտիվիստական կամ **բնագիտական-մեխանիկական** (Եր. Ֆրանգյան) ընկալումը ի ցույց է դնում իր կատարյալ սնանկությունը՝ դրանց հետևանքների բացահայտման տիրություն: Սակայն այստեղ է. Բերնհայմը կատարում էր մի մեծ վերապահում, ինչը ցուցանում է հասկացման պրոբլեմի նրա ընկալման ողջ խորությունը: Իր «Պատմական գիտության ներածություն» գրքույկի «Մշակույթի գործոնների հասկացումը» ենթակետում նա առաջադրում էր մշակույթի տարրերի՝ պատմաբանական գործընթացի վրա ազդեցության ճշգրտման (վերիֆիկացիայի) խնդիրը, որովհետև «...մշակույթի տարրերը ազդեցություն են գործում միայն այն պարագայում, երբ նրանք ընկալված, վերամշակված ու յուրացված են առանձին անհատների ու հասարակությունների կողմից: Դա դրսևորում է միմյանցից անսահմանորեն զանազանվող աստիճաններ՝ կախված մշակույթի համապատասխան ոլորտների տարբերություններից և նրանց հանդեպ հասարակությունների ու անհատների հատուկ վերաբերմունքից՝ ինչպես ժամանակի տարբեր հատվածներում, այնպես էլ համաժամանակյա»<sup>34</sup>: Ուրեմն՝ հոգեֆիզիկական պատճառականության ենթակշռություններից մեկի՝ մշակույթի դերակատարության հետազոտության միջոցով է. Բերնհայմը բացահայտում էր հասկացման պրոբլեմի ողջ բարդությունը՝ մերժելով պատճառականության զույգ կշռություններից որևէ մեկի վրա հիմնվող՝ իր ժամանակի պատմագիտությանը բնորոշ միակողմանի հարցադրումները, որովհետև եթե՝ «...տնտեսական մատերիալիզմի ներկայացուցիչները պատմության հիմնական պատճառն են համարում արտադրական հարաբերությունները, կամ օրինակ՝ Բոքլը մարդկության բոլոր հաջողությունները վերագրում է գիտությանը, իսկ բնագիտության ներկայացուցիչները այդ ասպարեզում բոլոր նվաճումները կախման մեջ են դնում տեխնիկայից... Նման հայացքների միակողմանիությունը կտրուկ կերպով աչքի է զարնում, եթե ինքդ քեզ հաշիվ տաս դրանց ելակետերի վերաբերյալ և առանց նախապաշարմունքների պարզաբանես **գարգացման գործուն պատճառները** (ընդգծումը մերն է-Գ. Խ.)<sup>35</sup>»:

Այսպիսով՝ հոգեֆիզիկական պատճառականության բեռնհայմյան ընկալումը նպատակ չունեի ուղղագիծ կերպով հերքելու պատճառականության նախորդ մեկնաբանություններում առկա միակողմանի հարցադրումները, այլ հասկացման միջոցով բացահայտելու դրանց ազդեցությունների ձևավորման մեխանիզմները և յուրաքանչյուրի կոնկրետ դերակատարությունը՝ որպես **գարգացման գործուն պատճառներ**: Սրանով փաստորեն «ընդհատ գիծ» էր քաշվում դարեր շարունակ մարդկության լավագույն մտածողներին համակած դետերմինիստական պատ-

33 Նույն տեղում, էջ 66:  
34 Նույն տեղում, էջ 67:  
35 Նույն տեղում:

ՀԻՄՆԱԲԱՐԵՐ  
2 (ՃԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՄԵՆԻԵՐ-ՂԵՂՄԵՆԻԵՐ, 2014  
ՎԷՆ ԿԱՄԱՆԱԿԱԿԱԿԱՆ ԿԱՄՈՒՄ

կերացումների տակ, քանզի դրանք չէին մերժվում իրենց կոնկրետ բովանդակության մեջ: **Խնդիրը տեղափոխվում էր պատմական պրոցեսում զարգացման գործուն պատճառների վերածվելու՝ նրանցից յուրաքանչյուրի ունակության ու հնարավորությունների քննության, փոխադարձ կապերի հետազոտության և կոնկրետ պայմաններում ու միջավայրերում յուրաքանչյուրի ֆունկցիոնալ դերակատարության բացահայտման հարթություն:**

Խոստովանենք, որ սաղմնային վիճակում՝ ընդհանուր գծերով, պատմագիտության առջև այս առաջադրանքը դրվել էր դեռևս Յո. Դրոյզենի կողմից, սակայն իդեալիզմի, մատերիալիզմի ու դուալիզմի միակողմանիությունները հաղթահարած և պատմության մոնիստական ըմբռնումի վրա հաստատված Է. Բերնհայմի մոտ այն ստանում էր կոնկրետ ու հստակ հարցադրման տեսք՝ Բ. Սպինոզայի հոգեֆիզիկական զուգահեռականության սկզբունքի և նրա հետագա զարգացումը դարձած՝ Հերման Լոտցեի պատմության «ինքնուրույն հիմնական գործոնների» մասին ուսմունքի խոր ու ամբողջական ընկալման և յուրացման շնորհիվ: Ուստի հոգեֆիզիկական զուգահեռականության պարզունակորեն ուղղագիծ և միմյանց հետ երբեք չհատվող **պարալելիստական բնույթի** մասին հռչանդացի մեծ հրեայի կանխադրույթն այլևս անընդունելի էր գերմանացի մեծ հրեայի համար: Ընդհակառակը՝ Է. Բերնհայմը առաջ էր քաշում նման զուգահեռների՝ որպես պատմության վրա ազդող հզորագույն գործոնների միջև **կոնկրետ պայմաններում առաջ եկող կոնկրետ հարաբերակցության** ճշգրտման առաջադրանքը՝ նախնական, սաղմնային ձևով շրջանառության մեջ դնելով իր անվանակցի ու մեծ ժամանակակցի՝ **Էռնստ Մախի** կողմից հասարակական երևույթների ուսումնասիրության տիրույթ տեղափոխված **ֆունկցիայի գաղափարը** որպես պատմական գործընթացը պայմանավորող դետերմինանտների առաջնության հարցի հստակեցման միջոց: **Որովհետև երևույթների կոնկրետ-պատմական ըմբռնումը պահանջում է ժամանակի ու տարածության որոշակի հատվածում ձևավորվող ինվարիանտի առաջ գալու կոնկրետ պատճառների բացահայտումը, այսինքն՝ իստորիզմի սկզբունքի գործնական կիրառումը և ոչ թե տեսական քննությունը:** Իսկ դա առաջ է բերում որոշակի պայմաններում ու միջավայրերում դրանցից յուրաքանչյուրի տեղի ու դերի ճշգրտման հարցը՝ պատճառահետևանքային կապերի բարդ շղթայում: **Ուստի՝ շուտով պարզ է դառնում որ մի պատճառը գործում է ոչ միայն մյուսին զուգահեռ, այլև հետադարձ կապի մեջ է նաև իր հետևանքների հետ, այսինքն՝ գոյություն ունի երկկողմ ու բազմակողմ կախածությունների մի ամբողջ ցանց:**

Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նկատում էր Եր. Ֆրանգյանը՝ «Պատճառականութիւնը ենթադրում ու շեշտում է պատճառի և հետևանքի ակտը: Նա չի ճանաչում և ընդունում ֆիզիքականի և հոգեկանի, տնտեսութեան և իդէօլոգիայի հաւասար արժէքը: Նա մեկը համարում է առաջնական, միւսը՝ երկրորդական»<sup>36</sup>: Իսկ պատմագետի համար ի՞նչ նշանա-

36 Եր. Ֆրանգեան, Հասարակագիտական էտիլոգներ: Հ.Յ. Դաշնակցութեան սոցիալ-փիլիս. աշխարհայեցողութեան հիմնավորման շուրջը, էջ 102:

կություն ունի պատմության ընդլայն խորապատկերի վրա այս կամ այն դետերմինանտի խաղացած դերն՝ ընդհանրապես: Այսինքն՝ ինչ նշանակություն ունի, թե դրանցից ո՞րն է առաջնային՝ կոնկրետ ժամանակային տիրույթից կամ տարածական հարթությունից դուրս, կոնկրետ գործառույթի ընկալումից անդին՝ մտքի բարձր ոլորտներում, երբ պատմության մոնիստական ընկալման շրջագծում «Նրանց հիմքը **մէկ է...**»<sup>37</sup>:

Ուրեմն՝ եթե պատմագետի իրական խնդիրը ուղղակի-անմիջական, գուգահեռ ու հետադարձ կապերի մեջ գտնվող և պատմության դետերմինանտներից պատմության **տարրերի** վերածվող առանձին գործոնների՝ զարգացման գործուն պատճառների վերածվելու մեխանիզմների հստակեցումն է, ապա խիստ ընդհանուր կատեգորիաներից կոնկրետ-պատմականի դաշտ տեղափոխվելու պրոցեսում նման առաջադրանքն անխուսափելիորեն վերածվում է պատճառներից յուրաքանչյուրի **ֆունկցիոնալ դերի** պարզաբանման: Այսպիսով՝ է. Բերնհայմի առաջադրած «գոյություն ունի միայն մեկ գիտություն» մոնիստական բանաձևի շրջագծում ֆունկցիայի գաղափարը հիմնովին խաբխլում է հոգեֆիզիկական գործոնների միջև առկա պատճառահետևանքային կապերի նախորդ ընկալումները:

Մանավանդ՝ պատմության բեկումնային պահերի քննության ընթացքում, երբ որևէ համակարգի փոփոխությունը հասնում է իր **բիֆուրկացիոն կետին**, ուղղագիծ-դետերմինիստական պատկերացումները միշտ էլ դրսևորել են իրենց անգորությունը: Ուստի դարեր շարունակ մարդկության մեծագույն մտածողներն այդպես էլ չեն կարողացել որոշել՝ ո՞րն է դրանցից առաջնայինը՝ «հավը», թե՛ «ձուն»: Այդպես է եղել, օրինակ, կապիտալիզմի զարգացման մեջ բողոքականության դերի քննության ընթացքում՝ **մարքսյան** տնտեսական և **վերերյան** հոգևոր-մշակութային դետերմինանտների բախման տիրույթում: Այդպես է նաև այսօր, երբ ազատագրական շարժումների ու հեղափոխությունների առաջացման պատճառները փորձում ենք հասկանալ ու բացատրել գուտ մատերիալիստական, իդեալիստական կամ դուալիստական մեկնակետերից: **Չի ստացվում**, որովհետև անընդհատ արձանագրում ենք երկկողմ ու բազմակողմ կապերի ու կախվածությունների մի ամբողջ ցանցի գոյության փաստը, ինչի անտեսման արդյունքում ճշմարտության փնտրտուքն իրականում վերածվում է ոչ թե գիտական ուսումնասիրության, այլ սոսկ «դիտանկյունի հստակեցման», այսինքն՝ մատերիալիստը փնտրում և անպայման «գտնում է» տնտեսական պատճառներ, իսկ իդեալիստը՝ ճիշտ հակառակը: Արդյունքում՝ պատմությունը ոչ թե գրվում, այլ «ձևվում է» պատմագետի «հագուստին» համապատասխան: Որովհետև...անտեվում է **կոնկրետ պատճառների ֆունկցիոնալ կապը**՝ պատմության մոնիստական ընկալման շրջագծում:

Ուստի, ինչպես նկատում էր է. Բերնհայմի ժամանակակից և շատ հարցերում նաև գաղափարակից Եր. Ֆրանգյանը. «Եսը և միջավայրը, առաջինն՝ իր բազմապիսի յղացումներով և տարրերով՝ իդէա, միտք, գի-

37 Եր. Ֆրանգեան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը. Իրանպաշտ փիլիսոփայություն, էջ 159:

տութիւն, իրաւունք, մօրալ, փիլիսօփայութիւն, և երկրորդը՝ իր բազմազան բաղկացուցիչ մասնիկներով – հող, աշխարհագրական դիրքը, կլիմա, տնտեսութիւն, գտնուում են ֆունկցիօնել յարաբերութեան, ֆունկցիօնել կախումի մէջ: Մէկ տարրի փոփոխութիւնը ուղեկցում է անպայմանօրէն միւսի փոփոխութեամբ...»<sup>38</sup>:

Ուրեմն՝ ֆունկցիոնալ կախումների առկայության փաստի միակողմանի իմաստավորումը ժամանակի ընթացքում դիտանկյունների տարբերությանը հաղորդել է գոյաբանական իմաստ ու նշանակություն: Մինչդեռ երևույթը նույնն է, ուստի վերջինիս ճանաչողության ամբողջականությունն ու միաժամանակ՝ խորությունը ուղիղ համեմատական է նրա ակունքներում առկա կոնկրետ պատճառների փոխազդեցության և ֆունկցիոնալ կապերի բացահայտման խնդրի լուծմանը:

Ֆունկցիայի գաղափարը, պատմության մոնիստական ընկալման տիրույթում լուծելով դարավոր գլոխկոտրուկի վերածված «հավի ու ձվի առաջնության» հարցը, նշանավորեց ավանդական դետերմինիզմի ձգնաժամը 20-րդ դարի պատմաճանաչողության մէջ: Էռնստ Բերնհայմի պատմատեսությունը ձևավորվեց այդ ձգնաժամի առաջացման նախնական փուլերում, ուստիև իր վրա կրում էր մարդկային մտքի՝ դետերմինիզմից դեպի ֆունկցիոնալիզմ անցման փորձերի ուժեղ և անմիջական կնիքը:

## Եզրակացություններ

– Իր կողմից առանձնացված՝ «հումանիտար փիլիսօփայությանը» տված նախապատվությամբ Է. Բերնհայմը շարունակեց ու խորացրեց Յո. Դրոյզենի ձևով՝ սուբյեկտիվիստական, էությամբ՝ մարդակենտրոն պատմաճանաչողության լավագույն ավանդույթները՝ Բ. Սպինոզայի առաջադրած ու Հ. Լոտցեի հստակեցրած հոգեֆիզիկական պատճառականության սկզբունքի օգնությամբ հարստացնելով նրա հետազոտական միջոցների գործիքակազմը:

– Գիտակցության փիլիսօփայության ձեռքբերումներին տրված նման նախապատվության պատճառը գերմանական փիլիսօփայության **մարդակենտրոն** ընկալումները պատմության ճանաչողության բանալիների վերածելու ցանկությունն էր, ինչը պատմության խնդրակարգի հստակեցման տիրույթում է. Բերնհայմի մոտ ընդունեց մարդկանց զարգացման փաստերը՝ նրանց, որպես սոցիալական էակների գործունեության հոգեֆիզիկական դրսևորումների ամբողջականություն քննելու ցանկության տեսք:

– Հաղթահարելով Բ. Սպինոզայի մոտ առկա հոգեֆիզիկական պատճառականության զուգահեռական (պարալելիստական) ընկալումը, Է. Բերնհայմն ապացուցեց, որ արտաքին-ֆիզիկական պատճառների ազդեցությունը մարդկային հասարակության ներսում դրսևորվում է անհատների գիտակցության մեջ թափանցելու և հոգեբանական ներգործուն պատճառների վերածվելու մեխանիզմի միջոցով, ինչով բացատր-

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 103-104:

վում է զարգացման գրեթե նույնական ելակետային պայմաններն ունեցող հասարակությունների և միևնույն մարտահրավերի առջև կանգնող անհատների՝ հավաքական կեցվածքներում ու անհատական վարքում արձանագրվող սկզբունքային տարբերությունների փաստը:

- Հետազոտելով նման իրողության առաջ գալու մեխանիզմները՝ Է. Բերնհայմը հաղթահարեց տիպական ու զանգվածային երևույթների ծնունդն ընդհանուր պատճառներով բացատրող օբյեկտիվիստական պատմաճանաչողության մեկնակետը և ապացուցեց, որ եզակի երևույթները և անհատի դերը միայն ընդհանուր պատճառներով բացատրելու պարագայում անտեսվում են մարդկության զարգացման ընթացքում ի հայտ եկող **տարբերությունները**, մինչդեռ զարգացման պրոցեսի ուսումնասիրությունը պահանջում է պատմության մեջ առաջ եկող **փոփոխությունների** ոչ միայն բովանդակության, այլև ընթացքի քննություն: Միևնույն ժամանակ, Է. Բերնհայմը հաղթահարեց հակառակ ծայրահեղությունը՝ նորկանտականներին բնորոշ՝ իդեոգրաֆիկ մեթոդի բացարձականացման միտումը՝ իր ուշադրությունը կենտրոնացնելով զանգվածային երևույթների ելքը պայմանավորող անհատականի առաջնության գործառնական մեխանիզմի հետահայաց քննության վրա: Այդ նպատակով նա մտովի վերախաղարկեց ժողովրդական ապստամբության ճնշման տիպական սցենարը:

- Մերժելով Վ. Վինդելբանդտի ու Հ. Ռիկերտի կողմից առաջադրած նոմոթետիկ ու իդիոգրաֆիկ մեթոդների կամ մոտեցումների ուղղագիծ հակաթեզը, Է. Բերնհայմն ապացուցեց, որ գոյություն չունի միայն մասսայական պայմաններով, կամ միայն անհատներով ու եզակի դեպքերով զբաղվող «գիտական պատմություն». գոյություն ունի միայն մեկ գիտություն, որի ճանաչողության անբաժանելի-հավասարազոր օբյեկտներն են հանդիսանում մարդկային գործունեության այդ երկու տեսակները:» «Համագիտական մոնիզմի» նման պաշտպանությունը Է. Բերնհայմի մոտ հանգում էր անցյալի մեկնաբանության իդեալիստական, մատերիալիստական ու դուալիստական ելակետերի բացասմանը՝ պատմությունը կերտող սուբյեկտի **մարդկայությունը** պայմանավորող գործոնների քննության միջոցով:

- Հոգեֆիզիկական պատճառականության դրսևորման երկու կշռույթների՝ **հոգեկանի ու ֆիզիկականի** փոխադարձ կախման ու փոխապայմանավորվածության մեխանիզմների, դրանց դրսևորման երեք մակարդակների՝ **եզակիի, տիպականի ու կոլեկտիվի** քննության բեռնհայմյան առանձնահատկությունը պատմությունն իբրև **զարգացման գործընթաց** դիտարկելու մեջ է: Այն իրականացվում է **կրկնակի պատճառական կախվածության**՝ ընդհանուր պատճառների ու պայմանների և հատուկ պատճառների շարքում, որոնց թվին էր դասվում հետազոտվող փաստը՝ որպես նրանց մաս:

- Իր համար ձշտելով հոգեֆիզիկական պատճառականության գույզ կշռույթների հարաբերակցությունը՝ Է. Բերնհայմը որպես հիմք ընդունեց պատմական պրոցեսում զարգացման գործուն պատճառների վերածվելու նրանց հնարավորությունների կոնկրետ-պատմական քննության, փո-

ՀԻՄՆ ԱՔԱՐՆԵՐ

Զ (ԺԲ) ԳՄՐԻ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՄՆԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՆՈՒՄԿԱՎԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ



խաղարձ կապերի հետազոտության և տարբեր պայմաններում ու միջավայրերում յուրաքանչյուրի ֆունկցիոնալ դերի բացահայտման խնդիրը:

- Է. Բերնհայմի առաջադրած՝ «գոյություն ունի միայն մեկ գիտություն» մոնիստական բանաձևի շրջագծում հոգեֆիզիկական պատճառականության գույգ կշռույթների միջև առկա երկկողմ ու բազմակողմ կախվածությունների մի ողջ ցանցի բացահայտումը հիմնովին խարխլում էր պատճառականության նախորդ՝ խիստ պարզունակ ընկալումները: Էռնստ Բերնհայմի պատմահայեցողությունը, ձևավորվելով նման իրողության առարկայացման նախնական փուլում, իր վրա կրում է դետերմինիզմից դեպի ֆունկցիոնալիզմ անցման անավարտ փորձերի կնիքը, քանզի ֆունկցիայի գաղափարը ոչ միայն հաղթահարում է առաջնության հարցը, այլև թույլ է տալիս խորանուխ լինել «ամենագոր» դետերմինանտները պատմաքաղաքական պրոցեսի կոնկրետ **տարրերի** վերածվելու գործընթացի ուսումնասիրության մեջ:

Summary

**IDEA OF HISTORY FROM JOHANN DROYSEN TO ROBIN COLLINGWOOD**

Part Two. Ernst Bernheim and psychophysical principle of causality

Gevorg S. Khudinyan

Ernst Bernheim (1850–1942) is one of the most original figures of European historiography of the late 19th and early 20th century. By means of published books, he formed a specific system of knowledge concerning the theoretical problems of history. He continued and deepened the best traditions of anthropocentric knowledge of the history of Jo. Droysen, also resorting to the help of the principle of psychophysical causality, which was proposed by B. Spinoza and specified by H. Lotze. The particularity of Bernheim's study of the relationship and interdependence of the two forms of psychophysical causation – mental and physical, as well as the three levels of their manifestation – single typical and collective, is to examine the history as a the development process. It was carried out in a number of double causality – the common causes and conditions and special conditions, including the fact surveyed as part of them.

Clarifying for himself the ratio of pair units of psychophysical causation, E. Bernheim took as a basis the problem of the particular historical review of their capabilities of transformation into functional reasons of development in the historical process, the study of mutual relations and the definition of the functional role of each in different conditions.

Резюме

## ИДЕЯ ИСТОРИИ ОТ ИОАННА ДРОЙЗЕНА ДО РОБИНА КОЛЛИНГВУДА

Часть вторая. Эрнст Бернгейм и принцип психофизической  
причинности

Геворг С. Худинян

Эрнст Бернгейм (1850–1942) является одним из наиболее самобытных представителей европейской историографии конца 19-го и начала 20-го века. Посредством опубликованных учебников он сформировал конкретную систему знаний касающихся теоретических проблем истории. Эрнст Бернгейм продолжил и углубил лучшие традиции антропоцентрического понимания истории Ио. Дройзена прибегнув к помощи принципа психофизической причинности, которая была предложена Б. Спинозой и конкретизирована Г. Лотце. Особенностью бернгеймовского изучения взаимосвязи и взаимной зависимости двух форм психофизической причинности – психической и физической, а так же трех уровней их проявления – единственной, типичной и коллективной, является рассмотрение истории как процесса развития. Оно осуществлялось в ряде двойкой причинной зависимости – общих причин и условий и специальных условий, среди которых рассматривался обследованный факт – как их часть.

Уточнив для себя соотношение двух форм психофизической причинности, Э. Бернгейм принял за основу проблему конкретно-исторического рассмотрения их возможностей перевоплощения в причины развития, исследования взаимных связей и определения функциональной роли каждого в различных условиях.

ՀԻՍՏՈՐԻԱԳՐ

Զ (ԺԲ) քառրի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

ՎԷՎ հասկանալիության հանդես